

Խ. Ա. Հ. Մ. ՅԻՆՎՈՂԿՈՄԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՍՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՀԱՆՔ № 531

ՔՈՂԵՔՆԵՐՈՒՄ ՅԵՎ ԳՅՈՒՂԱԿՆ ՎԱՅՐԵՐՈՒՄ
ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ
ԿՐԴԻ ՄԱՍԻՆ



368
Խ-11

ՀՐԱՀԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԽԸՀ ԳԵՏԱԳԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

368

Մ-11

ՀՐԱՀԱՆԳ № 531

**ՔՈՂԱՔՆԵՐՈՒՄ ՑԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՎԱՅ-
ՌԵՐՈՒՄ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ**

**ԻՆՉՊԻՄԻ ԳՈՒՅՔ ՅԵՎ ԻՆՉՊԻՄԻ ԱՂԵՏՆԵՐԻՑ Ե
ԱՊԱՀՈՎԱԳՐՎՈՒՄ**

§ 1. Կամավոր գերկոպարային ապահովագրության կարգով կոլտնտեսություններում (գյուղատնտեսական կոմունաներում, գյուղատնտեսական արտելներում և միատեղ նող մշակող ընկերություններում), ձկնորսային կոլտնտեսություններում, ինչպես նաև տնայնաբարդյունագործական սկզբնական կազմակերպություններում՝ գյուղերում, հաշմանդամների սկզբնական կազմակերպություններում՝ քաղաքներում և գյուղական վայրերում ապահովագրվում են՝

ա) շենքերը, ձեռնարկությունները, սարքավորումն ու ինվենտարը (բացի ձկնորսային գործիքներից)՝ կրակից, ճեղեղումից, յերկրաշարժից, փլումներից, սողումներից, փոթորիկներից, մրրկից, տարափից, կայծակահարությունից և շոգեկաթաների պայթումից,

բ) ձկնորսային նավերը՝ ամեն տեսակի տարերային աղետներից, լողալու ժամանակ և նավահանգիստներում,

գ) հատուկ և տեխնիկական մշակույթների, հացահատիկային ու բակլային, ինչպես նաև պաղատու և խաղողի այգիների, մրգարանների, բանջարանոցների և բոստանների բերքը՝ այնպիսի տարերային աղետներից, փորոնց պատճառած վնասների համար տվյալ վայրում և տվյալ մշակույթի վերաբերմամբ պարտադիր կոպարային ապահովագրության գծով Պետապի պատասխանատվությունն է սահմանված:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Կամավոր կարգով կարելի յե ապահովագրել կարտոֆիլը, ինչպես նաև այն բանջարանոցային և բոստանային մշակույթները, փորոնք գտնվում են

202
37

Թարգմանեց Մ. ՍԱՐԴԱՅԱՆ
Պատ. խմբագիր Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

Կիբովականի տպարան

Գլավլիսի լիազոր № Մ-2603

Պատվեր № 608

368

Խ-11

ՀՐԱՀԱՆԳ № 531

ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ ՅԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՎԱԶ-
ՐԵՐՈՒՄ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԴԻ ՄԱՍԻՆ

ԻՆՉՊԻՍԻ ԳՈՒՅՔ ՅԵՎ ԻՆՉՊԻՍԻ ԱԼԵՏՆԵՐԻՑ Ե
ԱՊԱՀՈՎԱԳՐՎՈՒՄ

§ 1. Կամավոր գերկովարյախն ապահովագրության կարգով կոլտնտեսություններում (գյուղատնտեսական կոմունաներում, գյուղատնտեսական արտելներում և միատեղ հող մշակող ընկերություններում), ձկնորսային կոլտնտեսություններում, ինչպես նաև տնայնա-արդյունագործական սկզբնական կազմակերպություններում՝ գյուղերում, հաշմանդամների սկզբնական կազմակերպություններում՝ քաղաքներում և գյուղական վայրերում ապահովագրվում են՝

ա) շենքերը, ձեռնարկությունները, սարքավորումն ու ինվենտարը (բացի ձկնորսային գործիքներից)՝ կրակից, հեղեղումից, յերկրաշարժից, փլումներից, սողումներից, փոթորիկներից, մրրկից, տարափից, կայծականարությունից և շոգեկաթաների պայթումից,

բ) ձկնորսային նավերը՝ ամեն տեսակի տարերային աղետներից, լողալու ժամանակ և նավահանգիստներում.

գ) հատուկ և տեխնիկական մշակույթների, հացահատիկային ու բակլային, ինչպես նաև պտղառու և խաղուի այգիների, մրգարանների, բանջարանոցների և բոստանների բերքը՝ այնպիսի տարերային աղետներից, վորոնց պատճառած վնասների համար տվյալ վայրում և տվյալ մշակույթի վերաբերմամբ պարտադիր կոպարային ապահովագրության գծով Պետապի պատասխանատվությունն ե սահմանված:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Կամավոր կարգով կարելի յե ապահովագրել կարտոֆիլը, ինչպես նաև այն բանջարանոցային և բոստանային մշակույթները, վորոնք գտնվում են

Թարգմանեց Մ. ՍԱՐԴԱՅԱՆ
Պատ. խմբագիր Հ. ՍԱՐԴԱՅԱՆ

202
37

Կիրովականի տպարան

Դաշվահամար Ամաղոց № Մ-2603

Պատվել Հ 608

սածիւանոցներում, պարնիկներում, ջերմոցներում և այդ
մշակութների սերմանոցները:

Դ) գյուղատնտեսական անասունները՝ մահացության դեպ-
քերից, անասնաբռնչի կարգադրությամբ մորթելուց (անասուն-
ների վարակիչ հիվանդությունները կանխելու ու դրանց վերջ
տալու նպատակով) և այն զեպքերից, յերբ անասունը մորթվում
է դժբախտ պատահարի հետևանքով կամ այնպիսի անբուժելի
հիվանդության, վորը զբկում են րան բոլոր տեսակի արտադրու-
ղականությունից (բանելու, պարենային և ազնվացեղային):

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Կոլտնտեսություններում և կո-
սպերատիվներում կամավոր գերկոպարային կարգով ապա-
հովագրվող գյուղատնտեսական անասուններին վերաբե-
րում են՝

ա) խոշոր յեղջյուրավոր անասունները (վոչ ազնվացեղ)՝ 6
ամսական հասակից.

բ) խոշոր յեղջյուրավոր անասունների ազնվացեղ մատղաշ
անասունները՝ 6 ամսականից մինչև 1 տարեկան հասակը.

շ) ձիերը (վոչ ազնվացեղ) 1 տար. հասակից.

դ) ազնվացեղ ձիերը՝ 6 ամսականից մինչև 2 տարեկան
հասակը.

ե) ուղտերը, ավանակները, ազնվացեղ յեղջերունները 6 ամ-
սական հասակից, իսկ մնացածը (վոչ ազնվացեղ) ուղտերը, ա-
վանակներն ու յեղջերունները, ինչպես նաև ջորինները և ձիերը
1 տար. հասակից.

զ) գոչիւարները, այծերն ու խոզերը՝ 6 ամս. հասակից:

Ազնվացեղ համարվում են այն զտարյուն և ազնվացած
ցեղի անասունները, փորոնք ցուցակագրված են հողային որդան-
ների ցեղային մատյաններում:

§ 2. Կաւալվոր կարգով կոլտնտեսություններում և ըսկեր-
նական կողմերատիվներում ապահովագրվում են մայր-ճագար-
ները, ազնվացեղ թոշունները (հավերը, բագերն ու սագերը) և
մեղունները (փեթակներում) տարերային աղեթների, հիվանդու-
թյունների և դժբախտ զեպքերի հետևանքով տեղի ունեցած մա-
հացությունից:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Մայր-ճագարները, ազնվացեղ հա-
վերը, բագերն ու սագերն ապահովագրվում են՝ 6 ամսա-
կան հասակից:

§ 3. Կոլտնտեսականների (տնտեսության վոչ հանրայնաց-
ված մասը), բանվորների, ծառայողների և կոռպերացված տնայ-
նագործների մոտ ապահովագրվում են՝

ա) կամավոր գերկոպարային կարգով՝ խոշոր յեղջյուրավոր
անասունները—6 ամսական հասակից, ինչպես նաև ձիերը, ուղ-
տերը, ավանակները, ջորիններն այն վայրերում, վորտեղ գյու-
ղատնտեսական արտելի որինակելի կանոնադրությունը թույլ է
ուղիս կոլտնտեսականներին այդպիսի գյուղատնտեսական ա-
նասուններ ունենալ 1 տարեկան հասակից.

բ) կամավոր կարգով՝ վոչխարները, այծերն ու խոզերը 6
ամսական հասակից:

§ 4. Աշխատավոր գյուղացիական մենատնտեսություննե-
րում, վոչ կոռպերացված տնայնագործների, արհեստավորների և
այլ աշխատավորների մոտ ապահովագրվում են՝

ա) կամավոր գերկոպարային կարգով՝ խոշոր յեղջյուրա-
անասունները 6 ամսականից մինչև 10 տարեկան հասակը, ինչ-
պես նաև ձիերը, ուղտերը, ավանակները և ջորինները՝ 1 տար.
մինչև 12 տարեկան հասակը.

բ) կամավոր կարգով՝ վոչխարները, այծերն ու խոզերը 6
ամսական հասակից:

§ 5. Կոլտնտեսականների և մենատնտեսների գյուղատըն-
տեսական անասուններն ապահովագրվում են մահացության
գեղքերից կամ այս հրահանգի § 1 «գ» կետում մատնանշված
պատճառներով մորթելուց:

§ 6. Կամավոր կարգով կարելի յե ապահովագրել՝

ա) կոլտնտեսության բոլոր շնչքերը, ձեռնարկություննե-
րը, սարքավորումը, ձկնորսային նավերն ու ինվենտարը, վո-
րոնք ապահովագրված են պարտադիր կոպարային կարգով, կամ
այդ գույքի մի մասը.

բ) կոլտնտեսությունների և սկզբնական կոռպերատիվների
հատուկ և տեխնիկական մշակույթների հացանատիկային և բակ-
լային կուլտուրաների ցանքերը, պաղատու և խաղողի այգինե-
րի, բանջարանոցների և բուսանաների բերքն այն դեպքերում,
յեթե ապահովագրվում ե տվյալ մշակույթով զբաղեցրած ամ-
բողջ տարածությունը.

գ) տվյալ տնտեսության ունեցած բոլոր գյուղատնտեսա-
կան անասունները կամ տվյալ տիպի կամ սեռի անասունները,
որինակ՝ բոլոր ձիերը կամ միայն բոլոր զամբրիկները և այլն:

կարելի յե ապահովագրել նաև առանձին անասունները, յեթե նրանք ունեն այնպիսի հատկանիշներ, վորոնցով կարելի յե վորոշել, վոր իրոք ապահովագրված անասունն ե սատկել.

դ) բոլոր մայր-ճագարները.

ե) բոլոր ազնվացեղ թռչունները կամ նրանց առանձին տեսակները, որինակ՝ հավերը, բաղերը.

զ) մեղուների բոլոր ընտանիքները (փեթակները):

§ 7. Այն գեպերում, յերբ մի վորեն գյուղատնտեսական մշակույթ (բացի բոլոր տարերային աղետներից ապահովագրվող մշակույթներից) տվյալ վայրում ապահովագրված ե համարվում պարտադիր՝ կոպարային ապահովագրության մի քանի տեսակներով, այդպիսին, ապահովագրվողի ցանկությամբ, կարելի յե կամավոր կարգով ապահովագրել կամ պատասխանատվության բոլոր տեսակներով կամ նրանցից վորեն մեկով:

§ 8. Հատուկ և տեխնիկական, հացահատիկային և բակլային, բանջարանոցային և բոստանային մշակույթներն ապահովագրվում են ընթացիկ տարվա համար ըստ պլանային տարածության: Պտղատու և խաղողի այգիների և մրգանների բերքն ապահովագրվում ե տնտեսության պաղաքեր տարածության համեմատ:

§ 9. Գյուղատնտեսակ անասունների — ճագարների, թռչունների և մեղուների կամավոր ապահովագրությունը կատարվում է ապահովագրություն կնքելու պահին տնտեսության ունեցած որյեկտների քանակությամբ:

§ 10. Յեթե կամավոր ապահովագրություն կնքելուց հետո և մինչեւ ապահովագրության ժամկետի լրանալը տնտեսությունը ձեռք ե բերում գյուղատնտեսական նոր անասուններ և թռչուններ նույն տեսակի (կամ սեռի), ինչ վոր ապահովագրվածներն են, կամ մեղուների նոր ընտանիքներ, ապա դրանց կարելի յե լրացուցիչ կերպով ապահովագրել տնտեսության մեջ մտնելու պահից:

Յեթե տնտեսության մեջ գերկոպարային կարգով ապահովագրվում են վոչ տվյալ տեսակի բոլոր անասունները, այլ նրանցից մի քանիսը (տես այս հրահանգի § 6 «զ» կետը), ապա լրացուցիչ կերպով կարող են ապահովագրվել տնտեսության մեջ մտած անասուններից այնպիսիները, վորոնք ստույգ հատկանիշներ ունեն և սատկելու գեպրում կարելի յե վորոշել, վոր սատկել և ապահովագրված անասունը:

§ 11. Կամավոր կարգով կարելի յե ապահովագրել միմիքայն առողջ և համապատասխան ինսամքով և պահպանությամբ ապահոված գյուղատնտեսական անասուններ, թռչուններ ու մեղուններ: Մեղունները (ընտանիքները) բացի այդ պետք և ունենամ մայրեր և անհրաժեշտ կերի պաշար:

§ 12. Յեթե ապահովագրվելիք տվյալ տեսակի անասունների մեջ կան հիվանդ կամ հյուծված անասուններ, ապա դրանք չեն ապահովագրվում: Այդ անասուններին տնտեսությունը կարող ե լրացուցիչ կերպով ապահովագրել առողջանալուց կամ պատշաճ տեսք ընդունելուց հետո:

Գյուղատնտեսական մատղաշ անասուններին, վորոնք ապահովագրական հասակի յեն հասել այն ժամանակաշրջանում, յերբ տվյալ տեսակի գյուղատնտեսասան անասունների ապահովագրությունն ե կնքված, անասնատիրոջ ցանկությամբ կարելի յե լրացուցիչ կերպով ապահովագրել մինչև հիմնական ապահովագրության ժամկետը լրանալը:

§ 13. Այն ձիերը, նմանապես և անեմո-տնտեսություններում (անեմիկի), վորոնք մալլեինյան տնտեսություններում են գտնվում չեն ապահովագրվում: Խսկ այն ձիերը, վորոնք սպասարկում են այդ տնտեսություններին (ապահովագրվում են պարտադիր կերպով), յեթե առողջ են, կարող են ապահովագրը վել գերկոպարային ապահովագրությամբ սովորական կարգով:

ԻՆՉՈՒՍԻ ԳՈՒՄԱՐՆԵՐՈՎ Ե ԱՊԱՀՈՎԱԳՐՎՈՒՄ ԳՈՒՅՔԸ

§ 14. Կոլտնտեսություններում և սկզբնական կոռպերատիվերում գույքը կարելի յե ապահովագրել ուղած գումարով, ապահովագրվողի ցանկությամբ, բայց վոչ ավելի քան՝

ա) շննֆերի, ձեռնարկությունների, սարքավորման, ձրկության նավերի և ինվենտարի վերաբերմամբ, վոր ապահովագրվում է պարտադիր կոպարային կարգով, այն տարբերությունը, վոր գոյություն ունի ինվենտար գնահատման և խսկան արժեքի միջև ապահովագրական որգանների գնահատությամբ.

բ) գյուղատնտեսական մշակույթների վերաբերմամբ՝ այն տարբերությունը, վորը գոյություն ունի պարտադիր կոպարային ապահովագրության կայուն նորմաների և բերքի լրիվ արժեքի (մթերման գներով), խսկայն մշակույթների վերաբերմամբ,

Վորոնց համար մթերման գներ չեն նահմանված՝ բերքի լրիվ արժեքով, սահմանված պետական գնման գներով.

գ) գյուղատնտեսական անասունների վերաբերմամբ՝ այն տարբերությունը, վորը դրյություն ունի պարտադիր կոպարային ապահովագրությամբ սահմանված կայուն նորմաների և անասունների լրիվ արժեքի միջև, վորոշված ապահովագրական որդանների կողմից կոլտնտեսային շուկայի գների հիման վրա.

դ) մայր-ճաղարների, ազնվացեղ թռչունների և մեղուների վերաբերմամբ՝ կամավոր ապահովագրության պատասխանավության այն նորմաները, վորոնք սահմանված են դաշնակից հանրապետությունների Ժողկոմինորհների կողմից ԽՍՀՄ Պետապի համաձայնությամբ:

§ 15. Կոլտնտեսականների և մենատնտեսների մոտ գյուղատնտեսական անասունները կարող են ապահովագրվել ուղաք գումարով, ապահովագրվողի ցանկությամբ, բայց այդ գումարը չի կարող ավելի լինել քան՝

ա) խոշոր յեղջյուրավոր անասունների, ձիերի, ուղտերի, ավանակների, ջորիների վերաբերմամբ—այն տարբերությունը, վորը գոյություն ունի պարտադիր կոպարային ապահովագրության կայուն նորմաների և անասունների արժեքի միջև, սահմանված ապահովագրական որդանների կողմից, հաշված պետական գնման գումարով.

բ) վոչխարների, այծերի և խոզերի վերաբերմամբ—այն նորմաները, վորոնք սահմանված են դաշնակից հանրապետությունների Ժողկոմինորհների կողմից ԽՍՀՄ Պետապի համաձայնությամբ:

ԽՍՀՄԻՒ ԺԱՄԿԵՏՈՎ Ե ԱՊԱՀՈՎԱԳՐՎՈՒՄ ԳՈՒՅՔԸ ԿԱՄԱԿՈՐ ԿԱՐԳՈՎ

§ 16. Թույքի (բացի գյուղատնտեսական մշակույթների ցանքերից) կամավոր ապահովագրությունն անց և կացվում տարվա ուղած ժամանակ և կնքվում ե մեկ տարով, ընդորում Պետապի պատասխանատվությունն սկսվում ե առաջին ժամկետի վճարումը կատարելուց անմիջապես հետո և վերջանում հերթական վճարումը ժամանակին չկատարելու վեպում:

ԽԱՆՈՒԹՈՒԹՅՈՒՆ 1.—Խոշոր յեղջյուրավոր մատղաշ անասունները 6 ամսականից մինչև 1 տարեկան հասակը,

ձիերը, ուղտերը, ավանակները, ջորիները և յեղջերուները 1 տարեկանից մինչև 2 տարեկան հասակը (իսկ ազնվացեղ ձիերը, ուղտերը, ավանակներն ու յեղջերուները 6 ամսական հասակից) կարող են ապահովագրվել մեկ տարուց ավելի պակաս ժամանակով, այսինքն մինչև այն ժամանակ, յերբ նրանք կհասնեն ապահովագրական հասակին և կապահովվեն պատասխանատվության լրիվ նորմայով պարտագիր կոպարային ապահովագրության կարգով (խոշոր լեղջյուրավոր անասունների համար՝ 1 տարեկան, իսկ ձիերի, ուղտերի, ավանակների, ջորիների և յեղջերուների համար 2 տ. հասակը):

ԾԱՆՈՒԹՈՒԹՅՈՒՆ 2.—«Այս անասունների համար, վորոնք ապահովագրվում են առանց անասնաբուժի, անասնաբուժակի կամ զոտեկինիկի կամ գյուղատեսեսի զննության, սահմանվում ե 15 որպէս կարանտինային ժամկետ: Յեթի այդ ժամանակվա ընթացքում անասունը սատկում ե, Պետապը պատասխանատվություն չի կրում, ինչից ել վոր առաջացած լինի այդ անկումը:»

Այդ դեպքում ստացած ապահովագրական վճարը վերաբարձրվում է ապահովագրվողին:

Որինակ՝ յեթի ապահովագրությունը կնքված և 1937 թ. ապրիլի մեկից, ապա ապահովագրական անդորրագրում պետք ե ցույց տրված լինի, վոր Պետապի պատասխանատվությունն սկսվում է 1937 թ. ապրիլի 16-ից և վերջանում է 1938 թ. ապրիլի 16-ին, իսկ անդորրագրում պետք ե գրել գուրս գրման և ապահովագրվողին հանձնման տարեթիվը և որը:

§ 17. Գյուղատնտեսական մշակույթներն ապահովագրվում են մեկ վեգիտացիոն շրջանի համար, ընդգորում, Պետապի պատասխանատվությունն սկսվում ե՝

ա) ցանովի մշակույթների վերաբերմամբ—ծլելու որվանից:

բ) տունկային մշակույթների վերաբերմամբ, վորոնք զարգանում են սածիներով, որինակ ծխախոտը, կաղամբը և այլն—տնկելու պահից:

գ) պաղատու այգիների և սրգարանների վերաբերմամբ—ծաղկելու (բողբոջներ գոյանալու) պահից, իսկ խաղողի այգիների վերաբերմամբ փնջեր տալու (օցաւետից) պահից:

Պետապի պատասխանատվությունը գյուղատնտեսական մշակույթների վերաբերմամբ վերջանում է բերքը հավաքելու պահից, այսինքն, ցանքը հնձելու, պտուղներ հավաքելու և այլն:

§ 18. Գյուղատնտեսական մշակույթների ապահովագրու-

թյունն ընդունվում ե մինչև ցանքի վերջանալը, բայց վոչ ուշ՝ քան այն ժամկետները, վոր սահմանված են հանրապետությունների կամ յերկրային (մարզային) գործադիր կոմիտեների կողմից տվյալ մշակույթի ցանքի համար, իսկ պաղատու այգիների, մրգարանների և խաղողի այգիների գերարեմամբ՝ մինչև ծաղկման սկիզբը կամ փնջեր տալը (օպերա):

Գյուղատնտեսական մշակույթները կարկտից, տարափից և փոթորկից կարելի յե ապահովագրել տարվա ուղած ժամանակ, ընդունվում, Պետապի պատասխանատվությունն սկսվում ե վճարումներ կատարելուց 24 ժամ հետո:

ՍՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ

§ 19. Գերկոպարային ապահովագրության վճարումները պահանձվում են պարտադիր կոպարային ապահովագրության տարիքային դրույքներով, բացառությամբ հետեւյալ իջեցրած տարիքային դրույքների՝

1) Կոլտնեսությունների և սկզբնական հոգաբերափակեցների համար

ա) խոշոր յեղջյուրավոր անասուններ ապահովագրելու գեղքում 2 ոուր. չափ	Ապահովա- գրական գու- մարի 100 մարդուց
բ) վոչխարներ, այծեր . . . 3—20 »	
գ) խողեր 3—75 »	

Այն գեղքում, յերբ կոլտնտեսությունների կողմից կամաց վոր կարգով ապահովագրվում ե կարկտահարությունից և միաժամանակ թրջումից, ցրտահարությունից, փթումից և հեղեղումներից տվյալ տնտեսության հացահատիկային ու բակլային կուլտուրաների ցանքսերի ամրող տարածությունը, հիշյալ տարիքային դրույքներից 10% զեղջ ե արփում:

2) Կոլտնեսությանների, բանվորների, ծառալողների և սկզբնական հոգաբերափակեցների տնդաւնների համար

Խոշոր յեղջյուրավոր անասունների ապահովագրելու գեղքում՝ 3 ոուրլու չափով ապահովագրական գումարի 100 ոուրլուց:

§ 20. Կանեփը և կտավատը յերաշտից ապահովագրելու համար ապահովագրական վճարումներ գանձվում են 2 ո. չափով՝ ապահովագրական գումարի յուրաքանչյուր 100 ոուրլուց:

§ 21. Հարավային կանեփը բոլոր տեսակի տարերային աղետներից, ֆլասատուններից և հիվանդություններից ապահովագրելու համար ապահովագրական վճարումներ գանձվում են 3 ո. 60 կ. չափով, իսկ վորայանկայի ապահովագրության համար՝ 4 ո. 60 կ. չափով, ապահովագրական գումարի յուրաքանչյուր 100 ոուրլուց:

§ 22. Մայրածագարները, աղնվացեղ թոշուններն ու մեղուները կոլտնտեսություններում, ինչպես նաև վոչխարները, այծերն ու խողերը կոլտնտեսականների և մենատնտեսների մոտ ապահովագրվում են ապահովագրական վճարումների այն տարիքային դրույքներով, վորոնք սահմանված են գաշնակեց հանրապետությունների կողմից և ԱՀՄ Պետապի համաձայնությամբ:

§ 23. Կոլտնտեսությունների և սկզբնական կոռպերատիվների շենքերը, ձեռնարկությունները, սարքավորումը, ինվենտարն ու ձկնորսային նավերը կամակոր գերկոպարային կարգով ապահովագրելու համար ապահովագրական վճարումները գործում են ապահովագրական գումարից այն տարբերության սահմաններում, վոր գոյություն ունի զույգի ինվենտար գնահատման և իսկական արժեքի (ապահովագրական որգանների գնահատման) միջև:

Որինակ՝ Կալինյան մարզի, Բեթեցկի շրջանի կոլտնտեսությունը ցանկություն և հայտնել իր բոլոր շենքերը, ինչպես նաև սարքավորումն ապահովագրել մինչև լրիվ արժեքը: Այդ շենքերն ու սարքավորումը պարտադիր կոպարային կարգով ապահովագրված են ինվենտար գնահատմամբ 40.000 ո., գումարով, իսկ ապահովագրական որգանների գնահատմամբ շենքերի և սարքավորման արժեքը վորոշված է 65.000 ո.: Այս գեղքում կոլտնտեսությունը կարող է լրացնել կերպով ապահովագրել շենքերն ու սարքավորումը կամակոր գերկոպարային կարգով իր ուղած գումարով, բայց վոչ ավելի քան 25.000 ո. (65.000—40.000): Պարտադիր կոպարային ապահովագրության ապահովագրական վճարումների դրույքը Բեթեցկի շրջանում սահմանված է 1 ո. 20 կ. ապահովագրական գումարի յուրաքանչյուր 100 ոուրլուց կամ 1,2%:

Ցեթե շենքն ու սարքավորումն ապահովագրվում են մինչև լրիվ արժեքը, այսինքն, 25.000 ո., ապահովագրական վճարության ապահովագրական վճարումները, վոր կոտարային

ապահովագրության ռարիֆով են հաշված, կկազմեն. 25,000 ռ.՝
1,20% ը., կամ 300 ռուբի:

§ 24. Կամավոր գերկապարային ապահովագրության վճարումները գյուղատնտեսական մշակույթներ ապահովագրելու համար հաշվարկվում են ապահովագրական գումարի այն տարրերության սահմաններում, վորը գոյություն ունի պարտադիր կոպարային ապահովագրության կայուն նորմայի և բերքի արժեքի մթերման կամ սահմանված պետական գների միջև:

Որինակ՝ բամբակի ցանքերը պարտադիր կոպարային կարգով ապահովագրված են կայուն նորմայով 200 ռ. մեկ հեկտարը:

Կոլտնտեսությունը ցանկություն և հայտնել իր ցանքերը լրացուցիչ կերպով ապահովագրելու մինչև բերքի լինի արժեքը և այդ արժեքն ապահովագրական տեսուչը վորոշել է 600 ռուբ. մեկ հեկտարը: Այս դեպքում բամբակի ցանքերը կարելի յեկամավոր գերկոպարային կարգով ապահովագրել 400 ռ. (600—200) սահմաններում մեկ հեկտարը:

Բամբակի կողարային ապահովագրության ապահովագրական վճարումների գրանցքը սահմանված է 2 ռ. 30 կ. ապահովագրական գումարի յուրաքանչյուր 100 ռուբլուց:

Յեթե բամբակին ապահովագրվում է 400 ռ. մեկ հեկտ., ապա կոպարային ապահովագրության գրույքներով վորոշված ապահովագրական վճարումները կկազմեն 400 ռուբլու 2,30% ը. կամ 9 ռ. 20 կ. ցանքի յուրաքանչյուր հեկտարին:

§ 25. Ապահովագրական վճարումները գյուղատնտեսական մշակույթների համար վորոշվում և գանձվում են պլանային տարածությունից: Յեթե ապահովագրվողը պլանային տարածությունից ավելի քիչ և ցանում, ապա ավելորդ ստացված ապահովագրական վճարումները տեսչությունն անմիջապես վերադնում և ապահովագրվողին կամ հաշվում յերկրորդ վճարման դիմաց: Յեթե փաստորեն ցանված տարածությունն ապահովագրվածից ավելի յէ ինում, ապա տեսչությունն, ապահովագրվողի ցանկությամբ, ապահովագրական վճարումների վերահաշվարկ և կատարում՝ փաստորեն ցանված տարածության համեմատ: Դրա համար ապահովագրվողը պարտավոր է ցանքն ավարտելուց 10 ռուբ. ընթացքում հայտնել շրջանային ապահովագրական տեսչությանը վերահաշվարկ կատարելու ցանկության և ապահովագրված մշակույթի փաստորեն ցանված տարածության մասին:

Ապահովագրվողի հայտարարությունն ստանալուց հետո տեսուչը պարտավոր է յերեք որվա ընթացքում ապահովագրական վճարումների վերահաշվարկ կատարել, իսկ ապահովագրվողը պարտավոր է վճարել իրենից հասանելիք լրա ուցիչ վճարումները շրջանա ին ապահովագրական տեսչությունից վերահաշվարկն ստանալու պահից 10 ռուբ. ընթացքում:

Յեթե ապահովագրվողը, վորը գերակատարել է ապահովագրված մշակույթի ցանքի պլանը, ցանկություն չի հայտնում վերահաշվարկ կատարելու մասին և չի մուծում լրացուցիչ վճարումները, ապա մեկ հեկտարի ապահովագրական գումարի չափը պակասեցվում է և վորոշվում ընդհանուր ապահովագրական գումարը փաստորեն ցանված տարածության վրա բաժանելու միջոցով:

§ 26. Կոլտնտեսությունների և սկզբնական կոռպերատիվ ների գյուղատնտեսական անասունների կամավոր գերկոպարային ապահովագրության ապահովագրական վճարումները հաշվարկվում են ապահովագրական գումարից, փոք ստացվում է պարտագիր կոպարային ապահովագրության կայուն նորմաների և անասունների իսկական արժեքի (ապահովագրական որպանների կողմից սահմանված) միջն յեղած տարբերությունից:

Որինակ՝ Յարութավյան մարզի, Գալիքի շրջանի կոլտնտեսությունը ցանկություն և հայտնել իր 50 ձին ապահովագրելու գերկոպարային կարգով: Ձիերն ապահովագրված են պարտագիր կոպարային կարգով, կայուն նորմաներով՝ 120 ռ. յուրաքանչյուրը, կամ 8500 ռ. ընդհանուր գումարով: Ապահովագրական որգանների՝ յուրաքանչյուր ձիու գնահատությամբ, բոլոր ձիերի իսկական արժեքը՝ վորոշված է 45,000 ռ.: Այս գեպօւմ ձիերը կարող են գերկոպարային կարգով ապահովագրվել ուղած գումարով, բայց վոչ ավելի քան 36,500 ռուբ. (45,000 ռ.—8500 ռ.): Ձիերի պարտագիր կոպարային ապահովագրության ապահովագրական վճարումների գրույքը Գալիքի շրջանում սահմանված է 4 ռ. 90 կ. ապահովագրական գումարի յուրաքանչյուր 100 ռուբլուց: Յեթե ձիերն ապահովագրվում են 36,500 ռ., ապա կոպարային ապահովագրության տարիքներով հաշված, ապահովագրական վճարումները կկազմեն 36,500 ռուբլուց 4,90% ով կամ 1788 ռ.:

Նոյն կարգով, բայց համապատասխան տարի փային գրույքներով և համապատասխան ապահովագրական գումարնե-

բով հաշվարկվում են կոլտնտեսություններում խոշոր յեղջուրավոր անասունների, վոչխարների, այծերի և խողերի գերկոպարային ապահովագրական վճարումները:

§ 27. Կոլտնտեսականների և մենատնտեսների տնտեսություններին պատկանող խոշոր յեղջուրավոր անասունների, ձիերի, ուղտերի, ավանակների, ջորիների և յեղջերուների կամավոր գերկոպարային ապահովագրության ապահովագրական վճարումները հաշվարկվում են ապահովագրական գումարից, վորը ստացվում ե պարտադիր կոպարային ապահովագրության կայուն նորմաների և անասունների արժեքի պետական սահմանված գնման գների (միջև յեղած տարբերությունից):

Որինակ 1.—Խվանովյան մարզի Խլինսկի շրջանի կոլտընտեսականն ապահովագրում ե իր կովը կամավոր կարգով: Պարագիր ապահովագրության ապահովության նորման՝ 135 ռուբ. յի կովի պետական սահմանված գնման արժեքը 600 ռ.: Կամավոր գերկոպարային կարգով կովը կարող է ապահովագրվել ուղած գումարով, բայց վոչ ավելի քան 465 ռ. (600—136): Խոշոր յեղջուրավոր անասունների պարտադիր կոպարային ապահովագրության ապահովագրական վճարումների դրույքը կոլտնտեսականների տնտեսություններում սահմանված է 3 ռ. ապահովագրական գումարի յուրաքանչյուր 100 ռուբլուց:

Յենթագրենք, թե կոլտնտեսականը կամենում ե կովը լրացուցիչ կերպով ապահովագրել 400 ռ.: Այս գեղքում ապահովագրական վճարումը կովի համար պարտադիր ապահովագրության դրույքներով կկազմի 400 ռ. 3% ը, կամ 12 ռուբ.:

Որինակ 2.—Նույն շրջանի մենատնտեսը կամավոր կարգով ապահովագրում ե իր կովը: Պարտադիր կարգով կովն ապահովագրված է 130 ռ., նրա պետական սահմանված գնման արժեքն է 600 ռ.: Լրացուցիչ կերպով կարելի յե ապահովագրել 470 ռ. գումարով (600—130):

Յենթագրենք, թե մենատնտեսը կամենում ե լրացուցիչ կերպով ապահովագրել իր կովը 400 ռ.: Պարտադիր ապահովագրության տարիֆային դրույքը սահմանված է 5 ռ. 10 կ. ապահովագրական գումարի յուրաքանչյուր 100 ռուբլուց: Վճարումների այդ դրույքը կիրառվում է նաև կամավոր գերկոպարային ապահովագրության վերաբերմամբ:

Այստեղից, կամավոր ապահովագրության ապահովագրա-

կան վճարումը կովի համար կկազմի 400 ռ. 5,1% ը, կամ 20 ռ. 40 կ.:

§ 28. Մայը-ճագարների, ազնվացեղ թոշունների և մեղուների կամավոր ապահովագրումը կոլտնտեսություններում, ինչպես նաև վոչխարներինը, այծերինը և խողերինը կոլտնտեսականների և մենատնտեսների մոտ վորոշվում ե ապահովագրական գումարից այն նորմաների սահմաններում, վոր վորոշում են դաշնակից հանրապետությունների ժողկոմխորհները ԽՍՀՄ Պետապի համաձայնությամբ:

Որինակ 1.—Ուզբ. ԽՍՀ կոլտնտեսությունը ցանկություն և հայտնել ապահովագրելու իր 120 փեթակները: Մեղուների կամավոր ապահովագրության նորման սահմանված է Ուզբեկ. ԽՍՀ ժողկոմխորհի կողմից 40 ռ. մեկ փեթակի համար:

Մեղուները կարող են ապահովագրվել ուղած գումարով, բայց վոչ ավելի քան 4800 ռ. (40×120): Յենթագրենք, թե ապահովագրական վճարումների դրույքը սահմանված է Ուզբ. ԽՍՀ ժողկոմխորհի կողմից 6 ռուբ. ապահովագրական գումարի յուրաքանչյուր 100 ռուբլուց:

Յենթե կոլտնտեսությունն ապահովագրում է մեղուներին պատասխանատվության լրիվ նորմայի չափով, այսինքն, տվյալ դեպքում 4800 ռ., ապա այդ տարիֆային դրույքով վորոշված ապահովագրական վճարումը կկազմի 288 ռուբլի:

Որինակ 2.—Յենթագրենք, թե կոլտնտեսականների վոչխարների կամավոր ապահովագրության պատասխանատվության նորման սահմանված է Ուզբ. ԽՍՀ կողմից 100 ռ. մեկ գլխին, իսկ ապահովագրական վճարումների դրույքը 4 ռ. 80 կ. ապահովագրական գումարի յուրաքանչյուր 100 ռուբլուց:

Այս գեղքում մեկ վոչխարը կամավոր կարգով 100 ռ. ապահովագրելիս կոլտնտեսականը պետք է վճարի 4 ռ. 80 կ.:

§ 29. Կամավոր ապահովագրությունը կնքելուց հետո անասունների, թոշունների և մեղուների (նոր ձեռք բերված և առողջացած) համար ապահովագրական վճարումները գանձվում են այն ժամանակի համեմատ, վորը մնացել է մինչև տնտեսության մյուս բոլոր անասունների, թոշունների և մեղուների ապահովագրության ժամկետը լրանալը, տվյալ տեսակի ապահովագրության համար սահմանված տարիֆի $\frac{1}{12}$ -ի հաշվով ամսական: Վոչ լրիվ ամիսները համարվում են վորպես լրիվ ամիսներ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Նույն հիմունքներով հաշվարկվում են նաև 6 ամսականից 1 տարեկան հասակ ունիցող խոշոր յեղջյուրավոր անապունքների ցեղական մատղաշների և մեկ տարեկանից մինչև յերկու տարեկան ծիերի, ուղարկի, ավանակների ու յեղջերունքների ապահովագրական վճարումները:

Որինակ՝ կոլտնտեսությունը սեպտեմբերի 1-ին գերկոպարային կարգով ապահովագրել է իր 70 խոզը: Փետրվարի 14-ին տնտեսության մեջ ընդունվել են նոր 5 խոզ: Այդ խոզերը նույնպես կարող են ապահովագրվել ընդվորում, ապահովագրական վճարումներ նրանց համար գանձվում են միմիայն այն ժամանակի համար, վորը մնացել է մինչև ապահովագրության վերջը, այսինքն, մինչև սեպտեմբերի 1-ը, կամ 7 ամագա համար: Դրա հաճեմատ վճարումների չափը վորոշվում է տարեկան վճարման $\frac{7}{12}$ -ի չափով:

ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

§ 30. Արտօնություններ, և զեղջեր կամավոր գերկոպարային ապահովագրության գծով տրվում են նույն հիմունքներով, նույն չափերով և նույն որյեկտների համար, ինչ վոր պարտագիր. կոպարային ապահովագրության գծով, սակայն, այն հաշվով, վոր արտօնությունների և զեղջերի ընդհանուր գումարը տնտեսությունից հասանելիք, կամավոր ապահովագրության տարիփներով հաշված, վճարումների 50% -ից ավելի չփես, ընդվորում, այդ զեղջերը տրվում են անկախ այս համանգի $\S 19$ -ում մատնանշված տարիփային գրույքների իջեցումից:

Որինակ՝ կոլտնտեսությունը գերկոպարային կարգով ապահովում է իր կաթնապրանքային ֆերմայի 50 կովը $25,000$ ռուբ. գումարով, թենիթագրենք, թե գերկոպարային ապահովագրության տարիփներով հաշված ապահովագրական վճարումը կազմել է 500 ռ.: Կոլտնտեսությանը պարտադիր ապահովագրության գծով զեղջ է արված 35% (20% ֆերմայում գանվող առատունների համար և 15% խոշոր յեղջյուրավոր անասունների պահպանման և զարգացման գործում ունեցած լավագույն ցուցանիշների համար):

Այդ նույն 35% -ի զեղջն արվում է գերկոպարային ապահովագրության գծով, այսինքն 175 ռ. գումարով (500 ռուբու 35% -ը):

2024

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

§ 31. Կամավոր ապահովագրության ապահովագրական վճարումներն ապահովագրվողների կողմից մուծվում ե համապատասխան անդրբագրերով, ԽՍՀՄ Ձինժողկոմատի կողմից սահմանված ձևով: Ապահովագրվողների ցանկությամբ մուծումը կարելի յե հետաձգել (բասարովկա): 50% մուծվում ե ապահովագրությունը կնքելիս, իսկ մնացած 50% -ն առաջին մուծումից յերկու ամիս հետո:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Գյուղատնտեսական կուլտուրաների մինչև ցանքսի սկիզբը կնքված ապահովագրության վճարումների մուծման համար յերկրորդ ժամկետը կարելի յե ավելի յերկարացնել քայլ վոչ ուշ, քան յերկու ամսից ցանքը վերջանալուց հետո:

Յեթե գյուղատնտեսական մշակույթների ապահովագրությունը կարկտից, տարափից, փոթորկից և կրակից (արմատի վրա) կնքվում է ցանքսից հետո, ապա ապահովագրական վճարումների ամբողջ գումարը պետք է մուծվի ապահովագրությունը կնքելու հետ միաժամանակ:

§ 32. Յեթե ապահովագրվողը սահմանված 10 որվա ժամկետում չի կատարում առաջին մուծումը, ապա ապահովագրությունը համարվում է չկայացած:

§ 33. Յեթե ապահովագրվողը յերկրորդ տպահովագրական վճարումը ժամանակին չի կատարում, ապահովագրությունը վերջանում է և Պետապը վոչ մի պատասխանատվություն ապահովագրված գույգիքի փչացման համար չի կրում, իսկ կատարված ապահովագրական վճարումները չեն վերադարձվում:

§ 34. Ապահովագրական վճարման առաջին մուծումը կատարելուց հետո, քայլ մինչև վճարման յերկրորդ ժամկետը լրանալը, գույգը փչանալու դեպքում, ապահովագրական վարձատըրությունից պահպան է ապահովագրվողից հասանելիք ապահովագրության վճարումների գումարը կամ դրա մի մասը (նայած ապահովագրական վարձատըրության չափին):

ՎՈՐ ԴԵԹՔԵՐՈՒՄ ՊԵՏԱԿՈՇ ԶԻ ՀԱՏՈՒՑՈՒՄ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՎՆԱՍՆԵՐԸ

§ 35. Պետապը չի հատուցում կամավոր ապահովագրության վնասներն այն բոլոր գեղջերում, վորի համար ապահո-

վագրվողը զրկվում է պարտադիր կոպարային ապահովագրության ապահովագրական վարձատրություն ստանալու իրավունքից: Բացի այդ, ֆլամեները չեն հատուցվում, յեթե ապահովագրվողը սահմանված ժամկետում չի մուծում իրենից հասանելիք կամավոր ապահովագրության վճարումները:

§ 36. Յեթե կամավոր կարգով ապահովագրված գյուղատնտեսական անասունը տվյալ տնտեսությունից դուրս և գալիս, ապա պատասխանատվությունն այդ անասունի համար կամավոր ապահովագրության գծով վերջանում է և մուծված վըճառումները չեն վերադարձվում:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1.—Այն դեպքերում, յերբ ապահովագրվում են բոլոր անասունները կամ տվյալ տեսակի անասուններ միայն (որինակ, բոլոր խոշոր յեղջյուրագոր անասունները կամ բոլոր ձիերը) և յուրաքանչյուր անասունը նույն ապահովագրական գումարով ու տնտեսությունը դուրս յեկած անասունների փոխարեն ձեռք և բերում նույն տեսակի նոր, դուրս յեկածից վոչ պակաս արժեք ունեցող անասուններ, ապա նման անասուններն սկզբում ապահովագրված անասունների ընդհանուր քանակի սահմաններում համարված են ապահովագրված առանց լրացուցիչ ապահովագրական վճարումներ կատարելու և նույն գումարով յուրաքանչյուրը: Իսկ յեթե տնտեսության մեջ անասուններն ապահովագրված են տարբեր գումարներով, ապա դուրս յեկած անասունների պատասխանատվությունը կարելի յեփոխարել նույն արժեքը ունեցող անասունների վրա այն դեպքում, յեթե նրանց արժեքը նոր ձեռք բերված անասունների արժեքից ավելի ցածր չե, հակառակ դեպքում պատասխանատվություն պեսք և սահմանել վոչ ավելի քան նոր ձեռք բերված անասունների արժեքը: Իսկ յեթե նոր ձեռք բերված անասունների արժեքը դուրս յեկածների արժեքից ավելի բարձր է, ապա ապահովագրական գումարը նրանց համար կարելի յերձացնել և համապատասխանորեն աետք և ապահովագրական վճարի վերադարձված ապահովագրական անասունների վերջը նաև նոր գնված անասունների վրա, վորոնք պատականում են բանվորներին, կոլտնահականներին, մենատնտեսներին և այլ աշխատավորներին: Յեթե նոր գնված անասունների արժեքն ավել է քան

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2.—«Պետապի պատասխանատվությունը տարածվում է մինչև առաջվա ապահովագրության վերջը նաև նոր գնված անասունների վրա, վորոնք պատականում են բանվորներին, ծառայողներին, կոլտնահականներին, մենատնտեսներին և այլ աշխատավորներին: Այն պայմանով միայն, յեթե այդ մասին հայտնվում է ապահովագրական տեսչին:

Յեթե նոր գնված անասունների արժեքն ավել է քան

տնտեսությունից դուրս յեկածների արժեքը, ապահովագրվողի ցանկությամբ նրանք կարող են ապահովագրվել մինչև նրանց իսկական արժեքը, մուծելով ապահովագրական վճարումների տարբերությունը:

Յեթե նոր գնված անասունների արժեքն ավելի ցածր է տնտեսությունից դուրս յեկածների արժեքից, ապա այդ անասուններն ապահովագրվում են նրանց իսկական արժեքի սահմաններում, ընդունվում ապահովագրական վճարումների տարբերությունն ապահովագրվողին չի վերադարձվում»:

ԳՈՒՅՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՐԳ

§ 37. Ապահովագրվողը (կոլտնահականը, մենատնտեսը) իր գույքն ապահովագրելու համար պարտավոր և հայտնել այդ մասին ապահովագրական գործակալին կամ տեսչին:

§ 38. Անասունների և այլ գույքի կամավոր ապահովագրության կնքումը և վերանորոգումը կատարվում են ապահովագրական տեսուչների կամ գործակալների կողմից ապահովագրվելիք գույքը զննելուց և գնահատելուց հետո:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 3.—Գյուղատնաեսական մշակություններն ապահովագրության ընդունվում են առանց զննության:

§ 39. Գյուղատնաեսական անասունները գննում են գնահատում և շրջանային ապահովագրական տեսուչը մտադիեսների՝ անասունաբուժերի (բուժակների), զոտեխնիկների կամ գյուղատնտեսների պարտադիր մասնակցությամբ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 4.—Այն վայրերում, վորտեղ չկան անասունաբուժ կամ անասոնաբուժակ, զոտեխնիկների կամ գյուղատնաես, կամ ըստ տեղական պայմանների, ապահովագրության յենթակա անասունների զննումն այդ պերսոնալի կողմից դժվարությունների յե հանդիպում, անասունների զննումը և գնահատումը թույլատրվում են կատարել ապահովագրական գործակալին կամ տեսչին:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 5.—Անասունների զննությանն ու գնահատմանը չեն կարող մասնակցել այն կոլտնահական գործականի (մասնագետները, վորի գույքը ներկայացված և ապահովագրելու համար:

§ 40. Ապահովագրվելիք անասունների և այլ գույքի զըննությունը պետք է կատարել առանձին խնամքով, վորպեսզի ապահովագրության չընդունել թույլ հիվանդ ու կանոնավոր խնամքով և պահպանությամբ չապահովված անասունների, ինչպես նաև գույքն ապահովագրության չընդունել այնպիսի գնահատմամբ, վորը գերազանցում է նրա իսկական արժեքից:

§ 41. Այնպիսի վայրերում, վորոնք անապահով են հայտարարված անասունների և թուչունների վարակիչ հիվանդությունների տեսակետից, տվյալ վարակիչ հիվանդություններին յենթակա անասունները և թուչունները կամավոր ապահովագրության թիվունելը չի բույլացրվում: Սակայն, այդ վայրերում մինչև դրանց անապահով հայտարարելը, սուր վարակիչ հիվանդություններից, արդեն իսկ կնքված ապահովագրությունները վերանորոգել թույլատրվում են:

§ 42. Կոլտնտեսություններում և սկզբնական կոոպերատիվներում շենքերի, ձեռնարկությունների, ձկնորսային նավերի սարքավորման և ինվենտարի գնահատումը կատարվում և դրանց իսկական արժեքով, այսինքն, հաշվի առնելով մաշվածության զեղջը (գուրս գալով ամորտիվացիան):

§ 43. Շենքերի իսկական արժեքը վորոշվում է այն գնահատման նորմաների հիման վրա, վորոնք սահմանվում են տըվյալ տիպի շենքերի համար պետական տեղական շինարարական կազմակերպությունների կամ շրջնողբաժինների կողմից, ընդուրում, պետք և զեղջ տալ շենքի մաշվածության համար յելնելով շենքի դրությունից:

§ 44. Գյողատնտեսական մշակույթի բերքը արժեքը վորոշվում է կոլտնտեսության (կոոպերատիվի) շրջնողբաժնի կողմից հաստատված պլանով, այդ մշակույթի պլանային բերքատիվության ու պետական սահմանված գնման արժեքի հիման վրա:

Իսկ յեթե տվյալ մշակույթի արտադրանքի համար մթերման գներ չեն սահմանված, ապա պետք է վերցնել տվյալ մշակույթի հիմնական արտադրանքի իրացման պահին տվյալ վայրում գոյություն ունեցող պետական սահմանված գինը:

Որինակ՝ կոլտնտեսությունը ներկայացրել է ապահովագրելու համար 100 հեկտար բամբակ: Նրա արտադրական պլանը միջին բերքատիվությունը սահմանված է 6 ցենտ. մեկ հեկ-

տարից, գոյություն ունեցող միջին մթերման գինը 100 ռ. յեմեկ ցենտաները:

Այս գեպօւմ մեկ հեկտար բերքի արժեքը կազմէ 100 ռ. $\times 6 = 600$ ռ., իսկ 100 հեկտ. = 600 ռ. $\times 100 = 60.000$ ռ.:

§ 45. Կոլտնտեսություններում և սկզբնական կոոպերատիվներում ապահովագրվելիք անասունների արժեքը վորոշվում է տվյալ տիպի անասունի և տեղական կոլտնտեսային շուկայում յեղած տիպի միջին արժեքի հիման վրա, հաշվի առնելով այն մթերային հատկությունները, վոր ունի ապահովագրվող անասունը:

Որինակ՝ տվյալ տեսակի (կով կամ ձի) և հասակի անասունի միջին արժեքը տեղական կոլտնտեսային շուկայում վորոշվում է 1000 ռ.

ա) ապահովագրվելիք անասունը նույն տեսակի և հասակի յե, ունի հատուկ հատկություններ (կաթնատվության, սնվածության, ույժի), վորոնք բարձրացնում են նրա արժեքը նույն տեսակի և տիպի միջին անասունների համեմատությամբ 20% -ով: Նման անասունը կարելի յե գնահատել 1200 ռ.

բ) իսկ յերբ անասունը, ընդհակառակը, ունի մի այնպիսի թերություն, վորն իջեցնում է նրա արժեքը, նույն տեսակի և տիպի միջին անասունի համեմատությամբ 30% -ով, ապա նման անասունին պետք է գնահատել տվյալ տեսակի և տիպի անասունների միջին արժեքից 30% -ով ավելի ցածր, այսինքն, 700 ռ.:

§ 46. Անասունի սահմանված պետական գնման արժեքը վորոշվում է նրա կենդանի քաշի և տվյալ վայրի համար սահմանված կենդանի քաշի միավորի (կիլոգրամ) պետական գնման արժեքի հիման վրա: Աղնվացեղ և մթերային խոշոր յեղջյուրափոր անասունների արժեքը վորոշելիս անհրաժեշտ է ոգտվել ԽՍՀՄ Հողդողկոմատի և Խորհանտօղկոմատի 1935 թ. սեպտեմբերի 2-ի հավելությունի շահագում:

Որինակ՝ կովի կենդանի քաշը 300 կգ. եւ Մեկ կիլոգրամ կենդանի քաշի պետական սահմանված գինը տվյալ վայրում՝ 1 ռ. 50 կոպ.: Կովի սահմանված գնման արժեքը կավասարվի 450 ռ.:

Անասունի պետական սահմանված արժեքը կարելի յե վորոշել նաև նրա մորթելաքաշի և մեկ կիլոգրամ մաի պետական սահմանված գնի հիման վրա:

Որինակ՝ յեթե միջակ գերություն ունեցող կովի կենդանի քաշը հավասար է 300 կգ., ապա նրա մորթելաքաշը կհավասարի 150 կգ. (50%): Յեթե մեկ կիլոգրամ մաս սահմանված պետական գնման արժեքը տվյալ վայրում 3 ռ. յե, ապա կովի սահմանված պետական արժեքը կկազմի 450 ռ.:

§ 47. Գյուղատնտեսական անասունների կենդանի քաշը վորոշում և կամ կշռելու կամ չափելու միջոցով:

Խոշոր յեղջյուրավոր անասունների կենդանի քաշը չափելու միջոցով վորոշում են հետեւյալ կերպ:

Անասունին կանգնեցնում են հարթ տեղում այնպես, վորապեսզի նրա գլուխն ու վիզը ձգված լինեն դեպի առաջ, առջևի և հետեւ վոտքերը դրված լինեն զույգ (իրար կողքի): Այնուհետև սանտիմետրի բաժանված յերկողով չափում են անասունի մարմինը յերկարությամբ հետաքաշի մեջտեղից մինչև պոչի արմատը և կրծքի շրջագիծն անմիջապես թիակներից հետո, ստացված թվերն իրար վրա բազմապատկում և բաժանում են 50-ի վրա: Արդյունքը կլինի անասունի կենդանի քաշը կիրամներով:

Որինակ՝ յենթագրենք, թե կովի մարմի յերկարությունը հավասար է 135 սանտ., իսկ կրծքի շրջագիծը 180 սանտ.: Բազմապատկելով իրար վրա այդ թվերը կստանանք (135×180) 24.300: Այս թիվը պիտի ե բաժանել 50-ի վրա. 24.300 բաժանելով 50-ի վրա կստանանք 486: Հետևապես, կովի կենդանի քաշը հավասար է 486 կիլոգրամի:

§ 48. Ապահովագրական հայտարարությունը կազմվում է յերկու որինակից: Կոլտնտեսություններում և սկզբնական կոռոպերատիվներում գույքը, ինչպես նաև գյուղատնտեսական անասուններ և մշակույթների ցանք ապահովագրելիս հայտարարությանը կցվում են ապահովագրվող գույքի ցուցակը, վորոնք նույնպես կազմվում են յերկու որինակից, Պետապի Գըլխավոր Վարչության կողմից սահմանված ձևով:

Ապահովագրական հայտարարության մեջ պետք է նշել թե ում և պատկանում գույքը՝ ինչպիսի գույքը և ապահովագրվում, նրա քանակը, արժեքը, կամ ավոր ապահովագրության ապահովագրական գումարը, հասանելիք ապահովագրական վճարումների գումարը և զրանց վճարման ժամկետները:

Յեթե առանձին գյուղատնտեսական անասուններ են ապահովագրվում և զանազան գումարներով, ապա ցուցակում

պետք է նշել նրանց առանձնահատկությունները (իսկ ձիերի վերաբերմամբ նրանց և նձնագրերի համարները):

Գյուղատնտեսական մշակույթների ապահովագրության վերաբերյալ հայտարարությունների մեջ պետք է նշել՝ ինչպիսի մշակույթ և կամենում կոլտնտեսությունը կամ կոռպերատախիլ ապահովագրել, ինչպիսի ցանքային առաջադրություն են տվել տնտեսությանը հողային որգանները, իսկ պատղատու և խաղողի այգիների, մրգարանների վերաբերմամբ՝ պաղատու տունկերի ինչպիսի փաստացի տարածություն ունի տնտեսությունը և ինչպիսի պլանային բերքատվություն և նախատեսնված յուրաքանչյուր ապահովագրվելիք մշակույթի համար:

Ապահովագրական հայտարարությունը կազմվում է ապահովագրական տեսչի կամ գործակալի կողմից, ընդվորում անասարութը կամ այլ մասնագետ, վորը զննում և ապահովագրվող անասուններին, պետք և տա գրավոր յեղբակացությունը գննված անասունի ապահովագրելու հնարավորությունը և սահմանել նրանց արժեքը:

Ապահովագրական հայտարարություն ու ապահովագրվող գույքի ցուցակներն ստորագրում են գույքատերը ու այն բոլոր անձինք, վորոնք զննել և գնահատել են գույքը:

Ապահովագրական հայտարարության մեկ որինակը (ցուցակի հետ միասին), յեթե ապահովագրվում է կոլտնտեսության կամ սկզբնական կոռպերատիվի գույքը) հանձնվում է ապահովագրվողին ապահովագրական վճարումներ կատարելու համար:

§ 49. Այն գեղքերում, յեթե ապահովագրվելիք գյուղատնտեսական անասունների մեջ հայտարարվում են հիվանդ կամ հյուծված անասուններ, ապա նրանց համար կազմվում ե առանձին մանրամասն ցուցակ, ցույց տալով, թե ինչու ավյալ անասուններն ապահովագրության մեջ չեն ընդունվել:

§ 50. Յեթե գույքը զննված է և ապահովագրվողին ուղարկված կամ հանձնված և ծանուցագիր (ապահովագրական հայտարարություն) ապահովագրական վճարումներ կատարելու մասին, բայց առաջին մուծումն ապահովագրվողը 10 որվա ընթացքում չի կատարել, ապա ապահովագրությունը համարվում է չկնքված և նոր ապահովագրություն կնքելու համար անհրաժեշտ և ապահովագրվող ամբողջ գույքի (բացի ցանքային) կրկնակի զննություն կատարել, իսկ յեթե գույքի կազմի մեջ փոփոխություններ են տեղի ունեցել ապա նաև գնահատել:

ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾ ԳՈՒՅՔԻ ՎՐԱ ՀՍԿԵԼԸ

§ 51. Կամավոր կարգով ապահովագրված գույքը շրջանային ապահովագրական տեսչությունների հատուկ և մշտական հսկողության տակ պետք է գտնվի:

Շրջապտեսուչները պարտավոր են ինչպես անձամբ, նույնպես և գյուղական և կոլտնտեսային հասարակությունն այդ դրուժին մասնակից անելու միջոցով սիստեմատիկութեն ստուգել ապահովագրված գույքի վիճակը՝ անվտանգության, պաշտպանության, գեղի այդ անտնտեսվար վերաբերմունք ունենալու տեսակետից:

Ցեֆե հայտնաբերվում են անտնտեսվարության կամ ապահովագրված գույքին սպառնացող այլ յերեսութներ, ապատեսուչը պարտավոր և զրագոր առաջարկել ապահովագրվողին ամենակարճ ժամկետում վերացնելու նկատված թերությունները և նախազգուշացնել նրան, վոր այդ առաջարկները չկատարելու դեպքում նրա գույքի նկատմամբ կիրցվի ապահովագրական պատասխանատվությունը:

Պատասխանատվությունից վերցնելու մասին նախազդուշացնում են, պատասխանատվությունից վերցնում ու ապահովագրությունը վերականգնում են նույն որգաններն և նույն կարգով, ինչ վոր պարտագիր կոպարային ապահովագրության գեղագում:

Ցեֆե կամավոր կարգով ապահովագրված գույքը վերցվում է պատասխանատվությունից (և ապահովագրությունը վոչնչացվում է), ապա ապահովագրվողին պետք է վերադարձնել մինչեւ ապահովագրության ժամկետի վերջը հասանելիք ապահովագրական վճարումների մասը: Ապահովագրական վճարումները պետք է վերադարձնել մինչեւ ապահովագրության ժամկետը մնացած ամիսների հաշվով, ընդուրում վոչ լրիվ ամիսները նկատիչպետք և առնել:

ՎՆԱՍՆԵՐԻ ԼՈՒԾԱՐՔԸ

§ 52. Կամավոր ապահովագրության վնասների լուծարքը կատարվում է նույն կարգով և նույն հիմունքներով, ինչ վոր կոպարային ապահովագրության վնասների լուծարքը:

§ 53. Կամավոր կարգով ապահովագրված գույքին պատճառած վնասների գիմաց տրվող ապահովագրական վարձատրու-

թյունը վորոշվում և նույն հիմունքներով, ինչ վոր պարտադիր կոպարային ապահովագրության վերաբերմամբ, բացառությամբ ապահովագրված գյուղատնտեսական մշակույթների կրկնացանքի և անասուններ մորթելու դեպքերի:

Ցեֆե փչացած տարածության վրա կրկնացանք կատարվում և նույն մշակույթով, ապա ապահովագրվողին վճարվում է փչացած սերմացույի արժեքն ու կրկնացանքի աշխատանքների արժեքը:

Ցեֆե, ըստ տարվա յեղանակի, նույն մշակույթով կրկնացանք կատարելու անհնարի և լինում և այդպիսին կատարվում է մի այլ, ավելի քիչ արժեքավոր մշակույթով, որինակ, բամբակը կրկնացանքում է կորեկով, ապա ապահովագրվողին վճարվում է փչացած մշակույթի ապահովագրության գումարի և նույնացան մշակույթի վերջին ընդհանուր յեկամատի միջն յեղածտարբերությունը: Այդ վերջինի ընդհանուր յեկամուտը վորոշվում է պլանային բերքատվության վերաբերյալ տվյալների հիման վրա, կայուն մթերման գներով:

Որինակ՝ բամբակը կոպարային կարգով ապահովագրված և 220 ո. և լրացուցիչ կերպով գերկոպարային կարգով՝ 600 ո. ընդհամենը 820 ո. մեկ հեկտարը: Բամբակը փչացել է և կրկնացանքել կորեկով, վորի ընդհանուր յեկամուտն է 50 ո. մեկ հեկտ.: Տվյալ դեպքում ապահովագրական վարձատրությունը կավասարվի 820 ո.՝ 50ո.՝ 706 ո.:

§ 54. Այն դեպքերում, յերբ անասնաբուժի կամ անասնաբուժակի կարգովը լրացնելու մեջ մորթված անասունի միսը պիտանի չի լինում գործածության համար, ապահովագրական վարձատրությունը վճարվում է տպահովագրական գումարի չափով:

Ցեֆե անասնաբուժի կամ անասնաբուժակի կարգագրությամբ մորթված անասունի միսը պիտանի յե ճանաչվում գործածության համար և ապահովագրվողը սահմանված գնման գներով հանձնում է այն մթերող կազմակերպություններին, ապա նրան վճարվում է ապահովագրական գումարի և մոի համար ստացված գումարի տարբերությունը:

Ցեֆե մորթված անասունի միսը գործածվում է սեփական կարգիների համար կամ վաճառվում է կոլխոզ շուկայում, ապա ապահովագրական վարձատրություն տրվում է ապահովագրական գումարի (պարտագիր և գերկոպարային ապահովագրու-

թյան) և մսի արժեքի (շուկայի գներով) միջև յեղած տարբերության չափով:

Մսի արժեքը սահմանված գնման գներով հաշվարկելու համար ապահովագրվողը պետք է ներկայացնի մթերման որդանի տեղեկանքը: Այդպիսի տեղեկանք չներկայացնելու դեպքում մսի արժեքը վորոշվում է կոլտնտեսային շուկայի գներով, անկախ այն բանից, թե վորքան և ստացել ապահովագրվողը մսի վաճառքից:

Որինակ՝ կովը, վորն ապահովագրված է 1000 ռ. (կայուն նորմա պյուս կամավոր ապահովագրություն), միջակ անասուն է, ունի 300 կգ. կենդանի քաշ, մորթված և անասնաբուժի կարգադրությամբ տվյալ վայրում անասունների հիվանդության բնույթը վորոշելու համար: Կովի միսը թույլ ե տրված գործածելու: Մորթելուց հետո ստացվել է 150 կգ. միս: Մսի սահմանված գնման արժեքը տվյալ վայրում 3 ոռորդի յե կիլոգրամը, իսկ կոլտնտեսային շուկայում՝ 6 ոռորդի:

ա) Յեթե միսն ապահովագրվողը հանձնել է մթերող կաղմակերպություններին սահմանված գնման գներով և ստացել է 450 ռ., ապա նրան պետք է վճարել 550 ռ. (1000—450):

բ) Յեթե միսն ապահովագրվողը վաճառել է կոլտնտեսային շուկայում և ստացել 900 ռ., ապա նրան պետք է վճարել 100 ռ. (1000—900):

գ) Իսկ յեթե միսը կոլտնտեսային շուկայում արժե վոչ թե 6 ռ. այլ 6 ռ. 75 կոտ. և ապահովագրվողը միսը վաճառել է 1012 ոռորդ, 50 կոտ., ապա նրան ստացվածքական վարձատքություն չպետք է տալ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Այն վայրերում, վորտեղ ձիու միս չին գործածում և հետեապես մորթված ձիու միսն սպագործել չի կարելի, ապահովագրական վարձատրությունը վճարվում է լրիվ գումարով:

§ 55. Բոլոր գեղքերում կամավոր գերկուլարային ապահովագրության ապահովագրական վարձատրությունը չի կարող սպահովագրվողի իսկական վասների չափից ավելի բարձր լինել:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Գյուղատնտեսական ան չ սուսների ապահովագրության վասների չափը սահմանելիս ստացած անասունի արժեքը վորոշվում է վոչ թե անասունի

ստակելու որվա արժեքի հիման վրա, այլ նրա արժեքով առողջ դրությամբ:

§ 56. Գերկուպարային կամ կամավոր կարգով ապահովագրված գյուղատնտեսական անասունների, թուչունների կամ մեղունների յուրաքանչյուր անկման, ինչպես նաև գյուղատնտեսական մշակույթների փչանալու յուրաքանչյուր դեպքում ապահովագրական տեսուչը կամ գյուղական խորհուրդը, վորը գյուղատնտեսական անասունների անկման մասին ակտ և կազմում, պետք է պարզի թե ինչ քանակությամբ գյուղատնտեսական անասունները (ընդհանուր առմամբ, յեթե ապահովագրված են բոլոր անասունները կամ տվյալ տիպի—յեթե ապահովագրված է գրանց մի մասը միայն), ինչպես նաև գյուղատնտեսական մշակույթների ինչպիսի տարածություն և մնացել առապահովագրական գեղքի որը: Եթե պարզվի, վոր անասունների, թուչունների կամ մեղունների քանակը կամ գյուղատնտեսական մշակույթների ցանքի տարածությունն ավելի մեծ է, քան ապահովագրվածը և լրացուցիչ ապահովագրություն չի կնքված (բացի այն գեղքերից, յերբ ապահովագրվում են առանձին, ապահովագրական հայտարարության մեջ կամ ցուցակում հատուկ նշված գյուղատնտեսական անասունները), ապա ապահովագրական վարձատրության հաշվարկը յուրաքանչյուր ապահովագրված անասունի համար կատարվում է այսպես՝ ապահովագրական գումարը, վորով ապահովագրված հն տվյալ տեսակի կամ սեռի անասունները, բաժանվում ե ապահովագրական գեղքի որվա նրանց քանակի վրա, ինչպես նաև տվյալ գյուղատնտեսական մշակույթի ցանքի հեկտարների թվի վրա:

Որինակ 1. Կոլտնտեսությունն ապահովագրել է 50 կով, առանց ցուցյա տալու նրանց նշանները և 30.000 ռ. ընդհանուր ապահովագրական գումարով, այսինքն, միջին հաշվով 600 ոռորդ յուրաքանչյուրը: Մեկ կովի անկման կապակցությամբ առաջացած վասը լուծարելու ժամանակ պարզվել է, վոր կոլտնտեսությունն ունի 60 կով: Այդ 10 կովի մասին կոլտնտեսությունը ըրջապահությանը չի հայտնել և նրանց լրացուցիչ կերպով չի ապահովագրել: Հետեապես ստակած կովի համար կարելի յե վճարել վոչ թե 600 ռ., այլ 500 ռ. միայն, այսինքն, 30.000 ոռորդ բաժանած 60-ի վրա:

Որինակ 2. Կոլտնտեսությունն ապահովագրել է 200 հեկտարամբակ, 600 ռ. հեկտ, կամ 120.000 ռ. ընդհանուր գումարով:

Ցանքի փաստացի տարածությունն է 225 հեկտ., լրացուցիչ 25 հեկտ. մասին կոլտնտեսությունը չի հայտնել և լրացուցիչ կերպով չի ապահովագրել: Այս դեպքում Պետապի պատասխանառվությունը մեկ հեկտարի համար կկազմի 120.000 ռ. բաժանած 225-ի վրա=533 ռ.: Բերքը մասնակի կերպով վկասվելու դեպքում վճարվում ե այդ գումարի մի մասը միայն:

ՍՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՎԱՐԶԱՏՐՈՒԹՅՈՒՆ ՎՃԱՐԵԼՈՒ, ՎՃԱՐՈՒՄ-ՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՅԵՎ ՀԱՇՎԻ ԱՐՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

§ 57. Ապահովագրական վճարումներ կամավոր ապահովագրության համար կոլտնտեսությունները մուծում են Պետրանկ իրենց ընթացիկ հաշիվներից փոխանցելու միջոցով՝ կամ ապահովագրական տեսչության ընթացիկ հաշվին կանխիկ դրամ մացնելու միջոցով, կոլտնտեսականներն ու մենատնտեսները՝ առանձին կանխիկ դրամ մուծելու միջոցով. ապահովագրական գործակալին կամ տեսչին, համապատասխան ձեր անդորրագրով, սահմանված ԽՍՀՄ ֆինժողկոմատի կողմից:

§ 58. Կոլտնտեսություններն ու սկզբնական կոռպերատիվներն անդրամ հաշվարկի կարգով ապահովագրական վճարումներ կատարելիս Պետրանկի բաժանմունքին ներկայացնում են հրաման յերեք որինակից, վորի մեջ պետք ե նշված լինի, թե ինչի համար են կատարվում վճարումները և դրանց գումարը՝ չըամանի մեկ որինակը (ապահովագրական վճարումներ կատարելու վերաբերյալ նշումով) Պետրանկը վերադարձնում ե կոլտնտեսությանը (կոռպերատիվին), յերկրորդ որինակն ուղարկում ե շրջապետաչությանը, իսկ յերրորդը թողնում իր մոտ:

§ 59. Սահմանված ժամկետից հետո վճարումներ ընդունել չեթույլարկում:

§ 60. Յուրաքանչյուր անդամ կամավոր ապահովագրության վճարումներ կատարելիս ապահովագրովներին ԽՍՀՄ ֆինժողկոմատի կողմից սահմանված հատուկ ձեր անդորրագրեր են արվում, գորոնց մեջ պետք ե անպայման ցույց արված լինի թե վոր գույլարքի համար են ընդունված կամավոր ապահովագրության վճարումները: Անդորրագրերը դուրս են գրվում յերեկու որինակից, վորոնցից մեկը արվում ե ապահովագրովներին, յերկրորդն ուղարկվում ե շրջանային ապահովագրական տեսչությանը:

Անդորրագրերի յերկրորդ որինակներն ուղարկվում են

րջանային ապահովագրական տեսչությանն ամսական 3 անգամ, յուրաքանչյուր ամսվա—1, 11 և 12-ին:

§ 61. Ապահովագրովները պետք ե պահեն իրենց մոտ ապահովագրական հայտարարություն-ցուցակները, ինչպես նաև ապահովագրական վճարումներ կատարելու վերաբերյալ անդորրագրերը և ներկայացնեն ապահովագրական ահսչին, ապահովագրված գույքը վկասվելու դեպքում:

§ 62. Կամավոր ապահովագրության վճարումները Պետրանկի բաժանմունքների ու մտից-յելից դրամարկղների կողմից հաշվի յին առնվում:

§ 63. Կամավոր ապահովագրության վճարումների կատարման հաշվառումն ու մուծանքների ժամկետների հսկողությունն ապահովագրական տեսուչն իրագործում ե ըստ ապահովագրական հայտարարությունների, յուրաքանչյուր կոլտնտեսության, կոլտնտեսականի ու մենատնտեսի համար առանձին: Դրա համար ապահուածը, անդորրագրերի յերկրորդ որինակները, ինչպես նաև դրամ վճարելու վերաբերյալ կոլտնտեսության հրամաններն ստանալուց հետո, գրանցում ե ապահովագրական հայտարարությունների մեջ իր ստացած վճարումների ամբողջ գումարները:

§ 64. Կամավոր ապահովագրությունը Պետրավի որգաններն անց են կացնում կատարյալ կամավորության հիման վրա: Կամավորության սկզբունքի յուրաքանչյուր խախտման գեղքը պետք ե անմիջապես խափանել և մեղագորներին պատասխանատվության յենթարկել:

Կատարյալի կերպով արգելվում ե կամավոր ապահովագրության վեարումները պարտադիր կոպարային ապահովագրության ապահովագրական ծանուցագրերի մեջ մտցնելը:


ԽՍՀՄ Ֆինանսների

Ժողովրդական Կոմիսար՝ Գ. Գրինկո

ԽՍՀՄ Պետապի Գլխավոր

Վարչության Պետ՝ Ս. ԱՐԱԼՈՎ

1937 թ. ապրիլի 9-ին
Մոսկվա



ЧОГ-5

Инструкция № 531

о порядке проведения добровольного страхования
в сельских местностях и городах



417

43.819